


# ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

# ORGANIC AGRICULTURE EXTENSION SERVICES

# КОНСУЛЬТАЦИИ ПО ОРГАНИЧЕСКОМУ СЕЛЬСКОМУ ХОЗЯЙСТВУ

«Շեն» ԲՀԿ առաջիններից էր, որ 2002թ սկսեց զբաղվել ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության զարգացմամբ: 2005թ-ից «Շեն» ԲՀԿ-ի կողմից առաջին անգամ Հայաստանում ստեղծվեց օրգանական գյուղատնտեսության խորհրդատվական ծառայություն, որը գործում է մինչև օրս: «Շեն» ԲՀԿ Օրգանական գյուղատնտեսության խորհրդատվական խումբը պատրաստ է աջակցել բոլոր այն արտադրողներին, որոնք ցանկանում են վարել իրենց տնտեսությունը օրգանական եղանակով և արտադրել օրգանական մթերք: Խորհրդատուները, այցելությունների, սեմինարների, հանդիպումների միջոցով, ֆերմերներին, արտադրողներին, վերամշակողներին կարող են տրամադրել մասնագիտական խորհրդատվություն, արտադրության կազմակերպման ընթացքում ծագած խնդիրների լուծման համար միջոցառումների մշակում և առաջարկում: Ինչպես նաև խորհրդատվություն օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրված միջոցների /բիոպրեպարատներ, բուսական թուրմեր, օրգանական պարարտանյութեր և այլն/, դրանց կիրառման ժամկետների և եղանակների մասին:

Խորհրդատվական խումբը աջակցում է ֆերմերին ավելի հեշտ իրականացնել անցումը ավանդական մշակությունից դեպի օրգանական: Մինչև օրս Շեն ԲՀԿ խորհրդատվական խումբը աշխատել է ավելի քան 370 ֆերմերների հետ, որոնք ցանկություն են հայտնել իրենց տնտեսությունները վարել օրգանական եղանակով:











## Նպատակը

Աջակցել Հայաստանի Հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության ներդրմանն ու զարգացմանը՝ մասնագիտական գիտելիքներ տրամադրելով օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց և տնտեսություններին:




## Գործունեությունը եւ տրամադրածծառայությունները

Շեն ԲՀԿ խորհրդատուները անհատական մոտեցում են ցուցաբերում յուրաքանչյուր տնտեսությանը և մասնագիտական խորհրդատվություն են տալիս բուսաբուծական, անասնապահական ճյուղերի, ինչպես նաև մթերքի վերամշակման, մեղվաբուծության, մթերքի չորացման արտադրական ճյուղերի զարգացման ուղղությամբ: «Շեն» ԲՀԿ Օրգանական գյուղատնտեսության խորհրդատվական խումբը պատրաստ է տրամադրել հետևյալ ծառայությունները.

- Նախնական այցելություն օրգանական արտադրությամբ հետաքրքրված ֆերմերներին, իրավիճակի, ռիսկերի գնահատում (դաշտի տեղադրությունը, դիրքը, հողային և ջրային հնարավոր աղտոտման ռիսկերը, ցանքաշրջանառության կամ պտղափոխության կիրառության հնարավորությունը, կապը հարևան տնտեսությունների հետ, ֆերմերի նախնական գիտելիքները և այլն):
- Օրգանական գյուղատնտեսության գաղափարի և վարման մեթոդների ներկայացում, պարզաբանում
- Աջակցություն ֆերմերներին կառավարման պլան կազմելու հարցում: Կառավարման պլանն իրենից ներկայացնում է օրգանական արտադրության կազմակերպման հիմքը, որն իր մեջ ներառում է ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռանկարային գործողությունների համակարգ՝ ապահովելով տնտեսության արդյունավետությունն ու կայուն զարգացումը:
- Ֆերմերների միավորում՝ խմբի ներքին վերահսկողության համակարգի մասին խորհրդատվություն և ներդրում
- Ընթացիկ խորհրդատվության տրամադրում, արտադրության կազմակերպման ընթացքում ծագած խնդիրների լուծման համար միջոցառումների մշակում և առաջարկում:
- Տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն սպառողներին օրգանական մթերքի վերաբերյալ,
- Աջակցել հավաստագրման համակարգ մուտք գործող ֆերմերներին կամ ֆերմերային խմբերին /հավաստագրման պրոցեսի, գործընթացների ներկայացում և պարզաբանում/,
- Սեմինարների կամ դաշտային օրերի կազմակերպում, անհրաժեշտ տեղեկատվական նյութերի պատրաստում և տրամադրում:
- Խորհրդատվություն օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրված միջոցների /բիոպրեպարատներ, բուսական թուրմեր, օրգանական պարարտանյութեր և այլն/, դրանց կիրառման ժամկետների և եղանակների մասին:
- Խորհրդատվություն օրգանական անասնապահության, մեղվաբուծության, վայրի հավաքի գործընթացների կազմակերպման վերաբերյալ:
- Փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում՝ առաջավոր ֆերմերների, արտադրողների համար հարևան պետությունների արտադրողների և մասնագետների հետ:





Shen NGO was amongst the pioneers starting organic agriculture in Armenia in 2002. In 2005 for the first time in Armenia Shen NGO established extension services for organic agriculture, which are active to this day. The Organic agriculture extension group of Shen NGO is ready to support all those producers who would like to switch to organic agriculture and produce organic agricultural products. Through field visits, seminars, meetings the extensionists can provide professional advisory services to the farmers, producers and processors, as well as develop and suggest activities to solve issues aroused during the production process. In addition to this, the group provides advisory services regarding the agricultural inputs allowed in organic agriculture (biological, herbal infusions, organic fertilisers, etc.) and the terms and methods of use.

The extension group supports the farmer to switch from traditional to organic agriculture more easily. Up to now Shen NGO has been working with more than 370 farmers, who have wished to switch to organic agriculture.





## Goal

To support the implementation and development of organic agriculture in Armenia through providing professional knowledge to individuals and farms using in organic agriculture.











## Activities and services provided

The extensionists of Shen NGO have an individual approach to each farm and provide professional advice regarding horticulture and animal husbandry, as well as processing, apiculture, dried fruit production. The organic agriculture extension group of Shen NGO is ready to provide the following services:

- Preliminary visit to the farmer interested in organic production, situation and risk assessment (location of the farm, risks of possible soil and water pollution, possibilities of using crop rotation, link with neighbouring farms, preliminary knowledge of the farmer, etc.)
- Presentation of the idea of organic agriculture and ways of cultivation, providing clarifications
- Assistance to the farmer in developing a management plan. The management plan is the foundation of organic production and includes a system of current and future activities ensuring the efficiency and sustainable development of the farm
- Uniting the farmers, advice and implementation of internal group monitoring system
- Providing ongoing advice, developing and suggesting activities towards the resolution of issues aroused during the production
- Providing necessary information to consumers regarding organic agriculture
- Supporting those farmers or farmers groups entering the certifying system (presenting and clarifying the process of certification)
- Organising seminars or on-farm events, preparing and disseminating necessary information materials
- Advisory services regarding the agricultural inputs allowed in organic agriculture (biologicals, herbal infusions, organic fertilisers, etc.) and the terms and methods of use of those
- Advisory services on the processes of organising organic animal husbandry, apiculture, wild picking
- Organising knowledge sharing events with leading farmers, producers and professionals from neighbouring countries



"Шен" БОО одним из первых в 2002г начала процесс развития органического сельского хозяйства в республике Армения. В 2005г впервые в Армении при содействии Шен была создана консультационная служба по органическому хозяйству, которая действует и поныне. Консультационная группа органического сельского хозяйства Шен БОО готова содействовать всем производителям которые желают вести свои хозяйства органическим способом и производить органическую продукцию. Консультанты по средством посещений, семинаров, встреч могут предоставить фермерам, производителям, перерабатывающим организациям специализированную консультацию, разработку и предложение мероприятий для разрешения проблем возникших при организации производственного процесса. А так же консультацию относительно сроков и способов применения допустимых в органическом сельском хозяйстве средств (биопрепараты, растительные настойки, органические удобрения и т.д.).

Консультационная група содействует фермеру облегчая переход от традиционного хозяйствоведения к органическому. До сегоднешнего дня консультационная группа Шен БОО работала более чем с 370 фермерами, изявившими желание вести свое хозвйство органическим способом.





## Цель

Способствовать внедрению и развитию органического сельского хозяйства в Республике Армения, предоставляя специализированную информацию фермерам и хозяйствам, занятым органическим сельским хозяйством.



## Деятельность и предлагаемые услуги







Консультанты проявляют индивидуальный подход к каждому хозяйству и проводят специализированные консультации по растениеводству, животноводству, а так же развитию производственных отраслей по сушению, переработке продуктов и пчеловодству. Органическая консультационная группа Шен БОО готова предоставить следующие услуги:

- Предворительные посещения фермеров заинтересованных органическим производством, оценка ситуации и рисков (распалажения жозяйства, риски возможных земельных и водных загрязнений, применения севооборота, связь с соседними хозяйствами, базовые знания фермера и т.д.).
- Предоставлени е и разяснение смысла и методы ведения органического хозяйства.
- Содействие фермерам в создании менеджмент плана хозвйствоведения.
- Формирование фермерских группи внедрение Системы Внутреннего Контроля.





- Текущие консультации, разработка и предложение мероприятий по разрешению возникшиж проблем при организации производства.
- Предоставление информации потребителю относительно органического производства.
- Содействие фермерам и фермерским группам для заявки в сертификационныю систему (разяснение сертификационного процесса и последовательность процедур).
- Организация семинаров, полвых дней, подгатовка и предоставление необходимого информационного материала.
- Консультация по применению допустимых в органическом сельском хозяйстве средств (биопрепараты, растительные настойки, органические удобрения и т.д.), сроки и способы применения.
- Консультация по органиескому животноводстяу, пчеловодству, организации дикого збора.
- Организация встреч по обмену опытом между передовыми специалистами, фермерами и производителями соседних государств.

110 Նալբանդյան փ., 0001 Երևան, Հայաստան
Հեռ. (+37410) 567031 Ֆաքս. (+37410) 565619 www.shen.am

110 Nalbandian ave., 0001 Yerevan, Armenia
Tel.: (+37410) 567031 Fax.: (+37410) 565619 www.shen.am

ул. Налбандяна 110, 0001, Ереван, Армения
Тел: (+37410) 567031 Факс.: (+37410) 565619 www.shen.am